Արձանագրություն N 3

,ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/155ե ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Երևան 10.08.2020թ.

Ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ս. Կատվալյան

Հանձնաժողովի անդամներ՝ Ս. Ասատրյան, Ն. Գալստյան, Մ. Գրիգորյան, Ա. Լոռեցյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ի. Եղիազարյան

1. Գնահատող գնահատող հանձնաժողովի նիստի մասին

(Ս. Կատվալյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ ԱՁ Ակսել Գալստյանի կողմից շտկվել է անհամապատասխանությունը: Գնահատող հանձնաժողովը՝ ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված ,Գնումների գործընթացի կազմակերպման մասինե Կարգի 42-րդ կետով, որոշեց մասնակցի հայտը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

2. Բանակցությունների անցկացման անհրաժեշտության մասին

/ Ս. Կատվալյան /

2.1 Հաշվի առնելով, որ **ՔՈՄՓ.ԷՅԷՄ ՍՊԸ**-ի կողմից ներկայացրած գնային առաջարկը 3-րդ չափաբաժնի մասով գերազանցում է նախատեսված ֆինանսական միջոցները և ելնելով երկրում առկա արտակարգ դրության պայմաններից, գնահատող հանձնաժողովը՝ համաձայն ,Գնումների գործընթացի կազմակերպման մասինե ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի, որոշեց մասնակցի հետ անցկացնել բանակցություններ հեռախոսակապի միջոցով **13.08.2020 թվականին ժամը 15:00-ին**:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ս. Կատվալյան)

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել **13.08.2020 թվականին ժամը 15:00-ին**, Երևանի քաղաքապետարան, Արգիշտիի 1, 3-րդ հարկ 309 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի. Նախագահ՝		Ս. Կատվալյան
Անդամներ՝		Ս. Ասատրյան
		Ն. Գալստյան
		Մ. Գրիգորյան
		Ա. Լոռեցյան
Քարտուղար՝		Ի. Եղիազարյան